## ԵՂԻՇԷԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐԸ

(Շարունակութիւն։)

Այդպիսի հիմք ներկայացնում է նոյն իսկ մեզ հետաքրքրող Եղիշէի եւ Ղազարի ինը ցանկը։

Համեմատելով չորս ընդհանուր ցանկն իրար հետ, ինչպէս որ նրանք պատմիչների մէջ են, մենք տեսնում ենք, որ նրանցից իւրաքանչիւրի մէջ յիշուած նախարարութիւնները իրենց աւագութեան կարգերը միշտ անփոփոխ պահպանում են միւս երեք ցանկի մէջ, եւ երբեք մի ցանկի կրտսեր նախարարութիւնը միւս ցանկերի մէջ չի յիշուում իւր աւագներից առաջ. իսկ այն նախարարութիւնները, որոնք նրանցից մէկի կամ միւսի մէջ չկան, իբրեւ միջանկեալ, եղած նախարարութիւնների աւագութեան կարգը չեն խանգարում։ Բարձական այս համաձայնութիւնը խանգարուում է միայն մի անգամ թիւ 4ում. Գնունին թ. 3ում Դիմաքսեանից յետոյ է յիշուած, իսկ թ. 4ում, ընդհակառակը, Դիմաքսեանից առաջ է յիշուած, ինչպէս Ս. Սահակի ցանկի մէջ է. բայց այս անհամաձայնութիւնը պէտք է պատահական համարիլ, ի նկատի ունենալով չորս ցուցակի համաձայնութիւնը միւս բոլոր դէպքերում։

Ահա ընդհանուր ցուցակների համեմատական տախտակը.[1]

Համեմատենք այժմ Եղիշէի յատկական ցանկերը ընդհանուր ցանկերի հետ եւ ստուգենք այն կարծիքը թէ Եղիշէն է այն ցանկերի հեղինակը, որոնք գտնում ենք անփոփոխ կերպով եւ Ղազարի մէջ, այսինքն ընդհանուր ցանկերի։ Այս համեմատութիւնից երեւում է, որ Եղիշէի յատկական ցանկերը (թ. 8 եւ 9) ընդհանուր ցանկերից խիստ տարբերուում են եւ թէպէտ թ. 8 եւ 1, ինչպէս եւ թ. 4 եւ 3 նման են, բայց մնացած հինգ դէպքի անհամաձայնութիւնն ի նկատի ունենալով, յիշեալ նմանութիւնները պատահական պէտք է համարել։ Ահա այդ համեմատութիւնը։ Տե՛ս

ՏԱԽՏԱԿ Գ. (էջ 59։)

Սակայն քիչ է, որ Եղիշէի յատկական ցանկերը ընդհանուր ցանկերից տարբերուում են. համեմատութիւնից երեւում է, որ Եղիշէի յատկական ցանկերը իրար մէջ անգամ չունին միատեսակ աւագութեան կարգ. ահա այդ համեմատութիւնը։ Տե՛ս

ՏԱԽՏԱԿ Դ. (էջ 59։)

Այժմ համեմատենք Ղազարի յատկական եւ ընդհանուր ցանկերը. այստեղից երեւում է, որ Ղազարի յատկական ցանկերից թ. 6ը միանգամից համաձայնում է 4 ընդհանուր ցանկին եւ թէպէտ մնացած դէպքերում նոյն մի-

### ՏԱԽՏԱԿ Բ.

| | ԹԻՒ 1. | Թիւ 2 | Թիւ 3 | Թիւ 4 |
|---|---|---|---|---|
| 1 | Սիւնի . . . . | 1 | | 1 |
| 2 | Արծրունի . . | | | 2 |
| 3 | Ռշտունի . . . | | | |
| 4 | Խորխոռունի . | 3 | 1 | |
| 5 | Մամիկոնեան . | | 2 | 3 |
| 6 | Մոկք . . . . | | | |
| 7 | Ապահունի . . | 4 | | |
| 8 | Ամատունի . . | | | 5 |
| 9 | Վահեւունի . | 5 | | |
| 10 | Անձեւացի . . | | | 8 |

| | ԹԻՒ 2. | Թիւ 1 | Թիւ 3 | Թիւ 4 |
|---|---|---|---|---|
| 1 | Սիւնի . . . . | 1 | | 1 |
| 2 | Բագրատունի . | | | |
| 3 | Խորխոռունի . | 4 | 1 | |
| 4 | Ապահունի . . | 7 | | |
| 5 | Վահեւունի . | 9 | | |
| 6 | Պալունի . . . | | 3 | |
| 7 | Գաբեղեան . . | | | |
| 8 | Ուրծայ . . . | | | |

| | ԹԻՒ 3. | Թիւ 1 | Թիւ 2 | Թիւ 4 |
|---|---|---|---|---|
| 1 | Խորխոռունի . | 4 | 3 | |
| 2 | Մամիկոնեան . | 5 | | 3 |
| 3 | Պալունի . . . | | 6 | |
| 4 | Գնթունի . . | | | |
| 5 | Դիմաքսեան . | | | 7 |
| 6 | Քաջբերունի . | | | |
| 7 | Գնունի . . . | | | 6 |
| 8 | Ընծայնոց . . | | | |
| 9 | Սրուանձտեան | | | |

| | ԹԻՒ 4. | Թիւ 1 | Թիւ 2 | Թիւ 3 |
|---|---|---|---|---|
| 1 | Սիւնի . . . . | 1 | 1 | |
| 2 | Արծրունի . . | 2 | | |
| 3 | Մամիկոնեան . | 5 | | 2 |
| 4 | Կամսարական . | | | |
| 5 | Ամատունի . . | 8 | | |
| 6 | Գնունի . . . | | | 7 |
| 7 | Դիմաքսեան . | | | 5 |
| 8 | Անձաւացեան . | 10 | | |
| 9 | Առաւեղեան . | | | |
| 10 | Մանդակունի . | | | |
| 11 | Տաշրաց . . . | | | |
| 12 | Ռափսոնեան . | | | |

---

[1] Մի քանի խօսք մեր տախտակները գործածելու մասին. վերցնենք Բ տախտակից թ. 1ի համեմատութիւնը թթ. 2, 3 եւ 4 ցուցակների հետ։ թ. 1ից միայն Սիւնի, Խորխոռունի, Ապահունի եւ Վահեւունի նախարարութիւններն են յիշուած թ. 2 ցուցակում, ուստի եւ այդ նախարարութիւնների դիմաց՝ թ. 2 սիւնակի մէջ նշանակուած են այն թուերը, որոնք թ. 2ի մէջ նրանցից իւրաքանչիւրի կարգն են ցոյց տալիս, ըստ պատմչի (Տես տախտակ Ա, թ. 2)։ թ. 3ի ուղղահայեաց սիւնակը ունի միայն Խորխոռունեաց եւ Մամիկոնեանի դիմաց թուեր, ուրեմն թ. 1ի մնացած նախարարութիւնները չկան թ. 3ում, իսկ այդ երկու նախարարութեան դիմաց նշանակած թուերը ցոյց են տալիս նրանց բարձական կարգերը թ. 3ում (տես տախտակ Ա, թ. 3)։ Վերջապէս թ. 4 ուղղահայեաց սիւնակի 1, 2, 3, 5, 6 թուերը ցոյց են տալիս իրանց հորիզոնական սիւնում գրած նախարարութիւնների կարգը թ. 4ում (տախտակ Ա, թ. 4)։ Այս համեմատութիւնից երեւում է, որ թթ. 2, 3, 4 ցանկերի այն նախարարութիւնները, որոնք յիշուած են

digitised by A.R.A.R.@

## ՏԱԽՏԱԿ Գ.

| | | Թիւ 1 | Թիւ 2 | Թիւ 3 | Թիւ 4 |
|---|---|---|---|---|---|
| | **ԹԻՒ 8.** | | | | |
| 1 | Արծրունի | 2 | | | 2 |
| 2 | Խորխոռունի | 4 | 3 | 1 | |
| 3 | Մամիկոնեան | 5 | | 2 | 3 |
| 4 | Պալունի | | 6 | 3 | |
| 5 | Ամատունի | 8 | | | 5 |
| 6 | Վահեւունի | 9 | 5 | | |
| 7 | Արշարունի | | | | 4 |
| 8 | Անձաւացի | 10 | | | 8 |
| 9 | Գնթունի | | | 4 | |
| 10 | Գնունի | | | 7 | 6 |
| 11 | Գաբեղեան | | 7 | | |
| 12 | Սահառունի | | | | |
| 13 | Դիմաքսեան | | | 5 | 7 |
| 14 | Քաջբերունի | | | 6 | |
| 15 | Մանդակունի | | | | 10 |
| 16 | Ընծայնոց | | | 8 | |
| 17 | Սլկունի | | | | |
| 18 | Տաշրաց | | | | 11 |
| | **ԹԻՒ 9.** | | | | |
| 1 | Ռշտունի | 3 | | | |
| 2 | Խորխոռունի | 4 | 3 | 1 | |
| 3 | Վահեւունի | 9 | 5 | | |
| 4 | Բագրատունի | | 2 | | |
| 5 | Ապահունի | 7 | 4 | | |
| 6 | Գաբեղեան | | 7 | | |
| 7 | Ակէոյ | | | | |
| 8 | Ուրծայ | | 8 | | |
| 9 | Պալունի | | 6 | 3 | |
| 10 | Ամատունի | 8 | | | 5 |

## ՏԱԽՏԱԿ Դ.

| | ԹԻՒ 8. | Թիւ 9 | | ԹԻՒ 9. | Թիւ 8 |
|---|---|---|---|---|---|
| 1 | Արծրունի | | 1 | Ռշտունի | |
| 2 | Խորխոռունի | 2 | 2 | Խորխոռունի | 2 |
| 3 | Մամիկոնեան | | 3 | Վահեւունի | 6 |
| 4 | Պալունի | 9 | 4 | Բագրատունի | |
| 5 | Ամատունի | 10 | 5 | Ապահունի | |
| 6 | Վահեւունի | 3 | 6 | Գաբեղեան | 11 |
| 7 | Արշարունի | | 7 | Ակէոյ | |
| 8 | Անձաւացի | | 8 | Ուրծայ | |
| 9 | Գնթունի | | 9 | Պալունի | 4 |
| 10 | Գնունի | | 10 | Ամատունի | 5 |
| 11 | Գաբեղեան | 6 | | | |
| 12 | Սահառունի | | | | |
| 13 | Դիմաքսեան | | | | |
| 14 | Քաջբերունի | | | | |
| 15 | Մանդակունի | | | | |
| 16 | Ընծայնոց | | | | |
| 17 | Սլկունի | | | | |
| 18 | Տաշրացի | | | | |

Թ. 1ում, հետեւում են իրար, բարձական կարգը պահպանելով նրանց մէջ այնպէս, ինչպէս Թ. 1ում է։ Իսկ Թ. 1ի այն նախարարութիւնները, որոնք չկան ԹԹ. 2, 3, 4ում կամ այն նախարարութիւնները, որոնք կան միայն Թ. 2ի կամ Թ. 3ի եւ կամ Թ. 4ի մէջ, չեն խանգարում ընդհանուր նախարարութիւնների բարձական կարգը. այսպէս օրինակ՝ այս համեմատութիւնից ստանում ենք միշտ կանոնաւոր անճող թուեր, որից երեւում է, որ աւագութեան կարգը անփոփոխ է բոլորի մէջ. —

Թ. 1—1 4 7 9  Թ. 1—4 5  Թ. 1—1 2 5 8 10
Թ. 2—1 2 3 4  Թ. 3—1 2  Թ. 4—1 2 3 5 8

Այս եղանակով պէտք է օգտուել եւ միւս համեմատութիւններից։

օրինակութիւնը չէ պահուած, բայց բացառութիւններն ի նկատի ունենալուց յետոյ պարզւում է, որ միօրինակութիւնը խանգարւում է այդ բացառութիւններով. օրինակ, Թ. 5 եւ 7 համաձայնում են Թ. 4ին. Թ. 7 համաձայնում է Թ. 1ին, եւ սրանք խանգարւում են միայն Ընձեւացեաց նախարարութեան դիրքով (Տես տախտակ Զ.)։ Նոյնպէս Թ. 5 համաձայնում է Թ. 3ին, խանգարւում է միայն Գնունեաց նախարարութեան դիրքով (Տես տախտակ Բ.)։ Ահա Դազարի յատկական եւ ընդհանուր ցանկերի տախտակը։

## ՏԱԽՏԱԿ Ե.

| | | Թիւ 1 | Թիւ 2 | Թիւ 3 | Թիւ 4 |
|---|---|---|---|---|---|
| | **ԹԻՒ 5.** | | | | |
| 1 | Սիւնի | 1 | 1 | | 1 |
| 2 | Արծրունի | 2 | | | 2 |
| 3 | Խորխոռունի | 4 | 3 | 1 | |
| 4 | Մամիկոնեան | 5 | | 2 | 3 |
| 5 | Վահեւունի | 9 | 5 | | |
| 6 | Մոկք | 6 | | | |
| 7 | Ընձեւացի | 10 | | | 8 |
| 8 | Ապահունի | 7 | 4 | | |
| 9 | Վանանդացի | | - | | |
| 10 | Արշարունի | | | | 4 |
| 11 | Ամատունի | 8 | | | 5 |
| 12 | Գնունի | | | 7 | 6 |
| 13 | Պալունի | | 6 | 3 | |
| 14 | Աշոցաց | | | | |
| 15 | Դիմաքսեան | | | 5 | 7 |
| 16 | Աբեղեան | | 7 | | |
| 17 | Առաւեղեան | | | | 9 |
| 18 | Ջիւնական | | | | |
| | **ԹԻՒ 6.** | | | | |
| 1 | Խորխոռունի | 4 | 3 | 1 | |
| 2 | Մամիկոնեան | 5 | | 2 | 3 |
| 3 | Կամսարական | | | | 4 |
| 4 | Պալունի | | 6 | 3 | |
| 5 | Դիմաքսեան | | | 5 | 7 |
| | **ԹԻՒ 7.** | | | | |
| 1 | Արծրունի | 2 | | | 2 |
| 2 | Վանանդացի | | | | |
| 3 | Արշարունի | | | | 4 |
| 4 | Անձաւացի | 10 | | | 8 |
| 5 | Ամատունի | 8 | | | 5 |
| 6 | Գնթունի | | | 4 | |
| 7 | Աշոցաց | | | | |
| 8 | Առաւեղեան | | | | 9 |
| 9 | Տաշրացի | | | | 10 |

digitised by A.R.A.R.@

Այսպէս ահա Ղազարի յատկական եւ ընդհանուր ցանկերի անհամաձայնող բացառիկ դէպքերի ստուգութիւնը թողնելով Եղիշէի եւ Ղազարի ձեռագրերի համեմատական ուսումնասիրութեան ձեռնարկողներին, մենք շարունակենք համեմատել Ղազարի յատկական ցանկերն իրար հետ, ըստ որում վերջիններիս փոխադարձ համաձայնութիւնը մի զօրեղ հիմք պիտի ընդունուի ճշգրտապատում պատմագրութեան, որից, ինչպէս տեսանք, Եղիշէն հեռու է։ Այս համեմատութիւնը մեզ ներկայացնում է երեք ցանկի միաձայն համաձայնող աւագութեան կարգը. բացառութիւնը միայն մի հատ է. Թ. 7 յիշում է Անձաւացին կրտսեր Վանանդացուց եւ Արշարունուց, իսկ Թ. 1, ընդհակառակ Անձաւացին աւագ է յիշում յիշեալ նախարարութիւններից։ Երեք ցանկի միւս բոլոր դէպքերում համաձայնութիւնն ի նկատի ունենալով, այս բացառութիւնը կորցնում է իւր հակառակող ոյժը, եւ անվիճելի է դառնում Ղազարի յատկական ցանկերի միօրինակ աւագութեան կարգը. ահա այդ համեմատութիւնը.

ցանկերի թիւը ոչ թէ չորս կը լինէր, այլ վեց կամ եօթը։

2. Եղիշէի յատկական ցանկերի հեղինակը Ե դարի պատմութեան անտեղեակ անձն է եւ պատմական ֆակտերը յեղաշրջող պատմիչ է, որովհետեւ նրա յատկական ցանկերը ոչ միայն ընդհանուր ցանկերից են տարբերւում, այլ եւ նրանք իրար մէջ աւագութեան կարգի միօրինակութիւն չունին։

3. Ղազարի յատկական ցանկերի հեղինակը համեմատաբար աւելի ծանօթ է Ե դարին. նա ինքն իրեն իւր երեք յատկական ցանկում համաձայնելուց յետոյ, միանգամից համաձայն է Թ. 6ով նաեւ չորս ընդհանուր ցանկին։

Առաջին եզրակացութիւնից հետեւում է, որ մեր ձեռքը հասած Եղիշէի եւ Ղազարի անուններով պատմութիւնների հեղինակները իրենց ձեռքին նոյն աղբիւր են ունեցել, որից դուրս են թողել չորս ընդհանուր ցանկը, եթէեւ մի երրորդ հեղինակի գործ։ Վերջին երկու եզրակացութիւնից հետեւում է, նախ՝ որ յատկական ցանկերի հեղինակները 451 թուի պատերազմին ժամանակակից անձերի

## ՏԱԽՏԱԿ Զ.

| | | Թիւ 6 | Թիւ 7 | | | Թիւ 5 | Թիւ 7 | | | Թիւ 5 | Թիւ 6 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **ԹԻՒ 5.** | | | | **ԹԻՒ 6.** | | | | **ԹԻՒ 7.** | | |
| 1 | Սիւնի | | | 1 | Խորխոռունի | 3 | | 1 | Արծրունի | 2 | |
| 2 | Արծրունի | | 1 | 2 | Մամիկոնեան | 4 | | 2 | Վանանդացի | 9 | |
| 3 | Խորխոռունի | 1 | | 3 | Կամսարական | 10 | 3 | 3 | Արշարունի | 10 | 3 |
| 4 | Մամիկոնեան | 2 | | 4 | Պալունի | 13 | | 4 | Անձաւացի | 7 | |
| 5 | Վահեւունի | | | 5 | Դիմաքսեան | 15 | | 5 | Ամատունի | 11 | |
| 6 | Մոկք | | | | | | | 6 | Գնթունի | | |
| 7 | Անձեւացի | | 4 | | | | | 7 | Աշոցաց | 14 | |
| 8 | Ապահունի | | | | | | | 8 | Առաւեղեան | 16 | |
| 9 | Վանանդացի | | 2 | | | | | 9 | Տաշրաց | | |
| 10 | Արշարունի | 3 | 3 | | | | | | | | |
| 11 | Ամատունի | | 5 | | | | | | | | |
| 12 | Գնունի | | | | | | | | | | |
| 13 | Պալունի | 4 | | | | | | | | | |
| 14 | Աշոցաց | | 7 | | | | | | | | |
| 15 | Դիմաքսեան | 5 | | | | | | | | | |
| 16 | Աբեղեան | | 8 | | | | | | | | |
| 17 | Առաւեղեան | | | | | | | | | | |
| 18 | Ձիւնական | | | | | | | | | | |

Ցոյց տալով այս վեց տախտակի վրայ բարձական հետեւողութեան նոյնութիւններն ու տարբերութիւնները, մենք գալիս ենք հետեւեալ եզրակացութիւններին. — 1. չորս ընդհանուր ցանկը եւ յատկական ցանկերը տարբեր հեղինակների գործեր են. հակառակ դէպքում միեւնոյն բարձական հետեւողութիւն ունեցող գործեր չեն, այլ ուշ ժամանակի պատմիչներ են նրանց հեղինակները, եւ երկրորդ՝ որ 451 թուին ժամանակով աւելի մօտ է Ղազարի յատկական ցանկերի հեղինակը, քան Եղիշէի։

Այսպէս ուրեմն մեր հիմքերի եզրակացութիւնն այն է, որ չորս ընդհանուր ցանկը մէկն է

digitised by A.R.A.R.@

այն հետեւելէց, որոնք մնացել են Եւդոկէ եւ Ղալաթի անուանով մեզ հասած պատմութեան մէջ նրանց փրասար ողջերէց։[1]

(Մնացեալը գալ անգամ։) Գր. ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆ

# ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

## ԵՐԿՈՒ ՀԱՅԱԶԳԻ ՆՈՐ ՊԱՇՏՕՆԵԱՅ

Հունգարիոյ վերջին պաշտօնարանին անկումը՝ ազգային պաշտօնեայ մը — Ալբերտոս Լուքաչ՝ վաճառականութեան պաշտօնեայն — ինկաւ, Նոր անուանուած Նախագահին ու իրեն մէջ եղած անձնական կարծեաց տարբերութեան պատճառաւ. բայց ընդ հակառակն երկու հայազգի նոր պաշտօնեայ անուանեց Վեհափառ կայսրը՝ հունգարական պաշտօնարանին համար։ Մէկն է Յոհաննէսինոս Դանիէլ՝ վաճառականութեան — միւսը՝ Լատիսլաւոս Լուքաչ՝ ելեւմտից պաշտօնեայ։

Ասոնց համառօտ կենսագրութիւնն ընթերցողաց առջեւ կը դնենք, յարմարագոյն ժամանակի մը թողլով՝ անոնց վրայ ընդարձակագոյն խօսիլը։

*Ա. Յոհաննէսինոս Դանիէլեան*

Վաճառականութեան պաշտօնեան ծնած՝ է Տորոնդալ գաւառին Էլէմէր քաղաքը 1843ին Մայիս 3ին, ու վարժական ընթացքն աւարտած ի Դէմէշվար՝ իսկ իրաւունքն ի Պուտաբէշդ։ 1865ին Տորոնդալ գաւառը զինք պատուոյ քարտուղար անուանեց։ Երեք տարի ետքը գաւառաբաժնի դատաւոր անուանուեցաւ, եւ երբ նոյն տարին փաստաբանութեան քննութիւնը րրաւ, ատենական դատաւորի պաշտօն ընդունեցաւ։ — Պէկա Ս. Գէորգի վիճակն 1870ին զինք իրեն երեսփոխան ընտրեց։ Այս վիճակին մէջ մնաց ութ տարի։ Ասոր վրայ Մեծ-պէչքերէքի մէջ զինք երեսփոխան ընտրեցին, իսկ 1884էն ի վեր պատգամաւոր էր Բանչովայի վիճակին։ Ինք յօրինեց ու կարգի բերաւ 1876ին Մեծ-պէչքերէքի՝ Տիսա գետին կանոնաւորութեան ընկերութիւնը, եւ մասնակցեցաւ Տիսա վայրին ընկերութեան սկզբնաւորուելուն, որուն կենդրոնական մասնաժողովին տարիներով անդամն է։ Ասկէ զատ՝ վերատեսուչ է ազգային խնայողութեան դրամատեղանին եւ վարչութեան անդամ շատ մը համակրթական ու բարերարական ընկերութեանց։ Պատգամաւորաց սենեկին մէջ ելեւմտից մասնաժողովոյն անդամն էր։

*Բ. Լատիսլաւոս Լուքաչեան*

Ելեւմտից պաշտօնեայն ծնաւ ի Զոլոթնա, 1850 մարտ 17ին։ Ուսումներն աւարտեց ի Գլուժ, ուր իրաւունք ալ սորվեցաւ։ Ասոր վրայ մեծագոյն ուսումնական ճանապարհորդութիւն մ'ըրաւ Եւրոպայի այլեւայլ կողմերը, եւ ստացածփորձառութիւններուն վրայ գրեց գիտնական համառօտ գրութիւններ։ 1874ին անուանուեցաւ իբրեւ արտաքոյ կարգի ուսուցիչ Ռաապ քաղաքի իրաւանց Ակադէմիային մէջ, սակայն այս պաշտօնէն հրաժարեցաւ երկու տարի ետքն՝ առողջութեանը վնասելուն։ — Հրապարակական ասպարէզը մտաւ 1878ին, երբ հունգարական Իկէնի շրջանը զինք երեսփոխան ընտրեց։ Այս վիճակին պատգամաւորութիւնն ըրաւ մինչեւ 1887։ Պատգամաւորաց սենեկին ելեւմտից մասնաբաժնին տեղեկատու (referent) էր, մինչեւ որ Կոլոմանոս Տիսա՝ 1887ին տէրութեան ատենադպիր անուանուած Աղեքսանդր Վէքէրլէի տեղը՝ զինքը խորհրդական ըրաւ ելեւմտից պաշտօնարանին մէջ։ — Ամէն մեծագոյն գործառնութեան, ինչպէս նաեւ տէրութեան ատենին հաշուեկշռութեան (bilance) տեղը բերուելուն մէջ մեծ դեր ունեցած է Լուքաչեան։ 1891ին հրաժարեցաւ ելեւմտից պաշտօնարանէն. այս առթիւ կայսրն իրեն Ս. Լէոբոլտոսի կարգին միջին խաչը պարգեւեց։ Լուքաչեան երեսփոխանաց սենեակը դարձաւ իբրեւ Ապրուտպանիայի պատգամաւոր։ Հոգին էր Լուքաչեան արժէգրամին փոխուելու գործառնութեան, որ առթիւ տէրութեան գանձին 21 միլիոն Փլորին վաստկցուց։ Տեղեկատու էր նաեւ շատ մը օրինագիր առաջարկութեանց։ 1893ին իբրեւ Պետութեան քարտուղար նորէն մտաւ ելեւմտից պաշտօնարանը։ — Լատիսլաւոս Լուքաչեան գլխաւոր տեսուչն է բովական ընկերութեան մը, Նախագահ Տրանսիլուանիոյ երաշխաւորութեան դրամատեղանին։ Ամուսինն է Ներքին գործոց պաշտօնարանին Նախկին քարտուղար Գէորգ Լուքաչեանի դուստրը։

ՅՈՎՀ. ԱՆԾԻ

[1] Մենք չէինք անցնում այն հարցին թէ այդ երեք կարգի ցանկերից որը որ շրջանի է համապատասխան, ուրեմն եւ նրանց գրութեան ճիշդ ժամանակը որոշելու խնդրին։ Չենք կազմում նոյնպէս այդ նպատակով յատուկ կական ցանկերի աւագութեան կարգը, որովհետեւ այդ, իբրեւ մեր նպատակից դուրս մի խնդիր, մեզ շատ կը հեռացնէր գլխաւոր հարցից։

digitised by A.R.A.R.@